

երգեր» (1914 թ.), 6. «Զօն» (խմբերգ, 1918 թ.), 7. «Sandek» (Բրքերէն, հրատ. Բագրի Լուսոողկոմի 1924 թ.), «Հելուս ևն օրերը» (խմբերգ, խօսք Զարենցի, 1924 թ.), 9. «Աշխատանքի երգը» (խմբերգ, խօսք՝ Յակ. Յակոբեանի, 1925 թ.), 10. «Մովի երգը» (խօսք՝ Յ. Կոստանեանի, 1925 թ.), 11. «Ողջոյն նորեկ աշխարհին» (խօսք՝ Յակ. Յակոբեանի, 1925 թ.), 12. «Նոր երգը» (խօսք՝ Զարենցի, 1925 թ.), 13. «Նորերի մարշը» (խօսք՝ Ալազանի, 1925 թ.), 14. «Զան, ջան սարեր» (խօսք՝ Վարսենիկ Ալասեանի, 1925 թ.), 15. «Գործարանում» (խմբերգ, խօսք՝ Յով. Յակոբեանի):

Երաժշտագէտ Անտօն Մայիլեանն ունի մի ցանկութիւն, այն է, որ իր անտիպ աշխատութիւնները տպագրւին և դառնան ժողովրդի սեփականութիւն, — ահա՛ էն բոլորը, ինչ որ նա կը ցանկանար իր 25-ամեայ բազմակողմանի անդուշ աշխատանքի համար:

(Շարայարեղի)

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

ՖՐԱՆԶԻՍԿԵԱՆ ԿԱՐԳԻՆ ԳԵՐԸ

ԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ ՄԷՋ

ՔՆՆԻՆՈՒՐ ԵԿԷԳԵՆՈՅ պատմութեան ընծայուեցան այս տարի նոր և փառաշուք էջեր՝ Միս Աստիգացւոյն մահուան եօթներորդ զարադարծի հանդէսներով: Սոյն մեծ դէպքին գրեթէ Եւրոպական ամէն թերթ և օրագիր քիչ թէ շատ էջեր նուիրեց: Աւելորդ պիտի չնկատուի Բագմովէպի մէջ եւս սեղ մ'ընծայել իբր ի յարգութիւն և ի սքանչացումն խոնարհ Աստիգացւոյն՝ որ ընդհանուր մարդկութեան այնքան մեծ բարիք մատուցած է: Մենք հոս մի միայն պիտի ներկայացնենք իր կարգին այն ծառայութիւնները՝ որոնք աւելցուցած են Գիտական աշխարհի համընթացութիւնը:

Այս ամփոփոյց մը պիտի տանք D. P. Abonti-ի հմտալից յօդուածէն, զոր հրատարակեր էր և L'osservatore Romano-ն՝ օրաթերթին մէջ:

Հ. Ղուկաս Վատտինկ հռչակաւոր պատմաբանը ֆրանչիսկեան կարգին, իւր Մա-

տենագիրք գրքին մէջ կը յիշէ 1931 Փրանչիսկեաններ, որոնք գիտութեան զանազան ճիւղերու մէջ փայլեցան: Երկար տարիներ Եւրոպայի գիտութեան հռչակաւոր բնմբը Ֆրանչիսկեաններն էին որ զբաւած էին, մանաւանդ իմաստասիրական և աստուածաբանական ճիւղերուն, ինչպէս Բարիզու, Օքսֆորտի, Պոլոնիոյ, Քէմպրիճի, Քոլունիոյ, Թուլուզի, Ալքալայի, Սալամանքայի, Էրֆորդի, Վիեննայի, Հայտնիպրկի և Ֆուլտայի համալսարաններուն մէջ, իրաւամբ անուանին կլաստոն կը գրէ «Օքսֆորտի, Քէմպրիճի, Բարիզու համալսարանները թակեղէն տարիներ կ'անցըէին երբ անոնց բնմբուն վրայ բարձրացած էին խոնարհ եղբայրներ, երբ Տունս Սքոթ, Ալքեսանդր Ալէս, Տէմորիսկոյ, Բէքքամ և Օքքամ կ'ուսուցանէին բոլոր աշխարհի»:

Տեսական Աստուածաբանութեան առաջին դասախօսն եղաւ Ս. Անտոն Բատուացի, որ 1223ին առաջին անգամ զրկուեցաւ Պոլոնիա Ս. Ֆրանչիսկոսէն Ա.

Ալէս եղաւ ամենէն անուանի Ֆրանչիսկեանը որ ուսոյց ի Բարիզ, և ամենուն ծանօթ էր «Այնպիսի վարդապետ» «Թագաւոր աստուածաբանից» տիտղոսներով իրեն հանրածանօթ Ամփոփոմն գիրքը յաջողագոյն փորձ մ'էր Արիստոտելեան իմաստասիրութիւնը ծառայեցնելու իրրի գործի և օժանդակ կաթողիկէ աստուածաբանութեան և ինքն եղաւ ուսուցիչ Ս. Թովմայի և Պոնտանթուրայի, եկեղեցւոյ վարդապետաց կոթողներուն, որոնցմէ յետինս նոյն կարգէն՝ իր աստուածաբանական հմտութեամբ հռչակուեցաւ բոլոր աշխարհի մէջ, իրեն Համառօտախօսութիւն գիրքը, ինչպէս կը վկայէ Շիմէն, և կը պարունակէ իր ժամանակի աստուածաբանութեան բոլոր էութիւնը, և ամենալատարեալ ամփոփում մ'է մինչև ցարդ հասած ամբողջ Տեսական աստուածաբանութեան ։ Դպրոցական աստուածաբանից մէջ ամենէն աւելի ներքամիտն եղաւ Տունս Աբոթ, Խորամիտ Վարդապետ, Նոր Արիստոտել, Իշխան Աստուածաբանից Վարդապետ Մարիամեան տիտղոսներով փառաւորուած ։

Մեկնաբանութեանց մէջ փայլեցան ուրիշ շատերէ զաւ Նիկողայոս Լիբացի, որուն Ս. Գրոց մեկնութիւններն ու յորդորակները մեծ յարգ ստացան ԺԵ. և ԺԶ. դարերուն ։ Ս. Գրքի ուսումնասիրութեան մէջ մասնաւոր ուշադրութեան արժանի է ծիրանաւոր Քսիմենէսի «Քովփոլոգիան Բագմաթիզմ», Ս. Անտոն Բասուալոյ Ս. Գրքի համադրարարութ, Յովհաննէս Մարգրեգինոյի Mammotrectus, որոնց ամենուն համար կարելի է ըսել թէ իրենց տեսակին մէջ առաջինն եղան ։

Իսկ ներկայիս բոլոր աստուածաբաններու մէջ կը գերազանցէ զամենքը կղոզիոս Ֆրասսէն, որ գրեթէ 30 տարի դասախօսեց Սորպոնայի բեմին, և հրատարակեց իր նշանաւոր Սքոր Ակտոքմականը 12 հատորներու մէջ, Մեծ հեղինակութիւն և ազդեցութիւն ունեցաւ նաև Անճելոյ Քրիվագոյի «Հրեշտակական Բովանդակութիւն» որ նոյն իսկ Լուստերի ջիղերը

գրգռեց, որ բարկացած Վիթթէմպերի վաճառքի հրապարակին մէջ կրակի տուաւ զայն ։

Բնական գիտութեանց մէջ իր զարմանալի հանճարովն ու հմտութեամբ փայլեցաւ Ռուճնեբոյ Պաքոն, որ իրաւամբ կարելի է կոչել «Փորձառական գիտաբանաց հայրը», առաջինը ինքն ըլլալով մականծութեան ոճը գործածողներէն, Հիւմպոլտ մեծ գիտնականը կը հաստատէ թէ Պաքոն քնական գիտութեանց մէջ ամենամեծ և ամենակարևոր դէմքն էր Միլիէն դարոս ։ Տարիներ առաջ երբ Օքսֆորտի մէջ գտնուեցաւ աշխարհահռչակ Քրանչիսկեանի արձանը՝ Պ. Արքեպիսկոպոս Ճէյքի ներկայացուց զինքը հանրութեան իրրի անձ մը այնքան երեւելի՝ որքան խորհրդաւոր, որոյ նմանը երբեք գիտութիւնը չէր տուած ։ Մինչ Լորդ Կլերգոն կը հաստատէր, թէ Պաքոնի յիշատակները նորոգելով և կամ հրատարակելով անոր գործերը, ինչպէս որ են՝ պատմութեան և գիտութեան մեծ պարագովիւն մը պիտի լեցուէր ։ Անոր գործերը ութսունի կը հասնին, որոնց մէջ ամենէն ականաւորներն են Մեծ երկ, Փոքր երկ և Ետակ. այս երեքից գործերու մէջ այնքան պայծառ կը խօսի աստղաբաշխական օրէնքներու վրայ՝ որ այսօր իսկ ընդհանուր կերպով ընդունուած են ։ Կը քննէ և կը հաստատէ նորանոր գիտներու կարելիութիւնը, ինչպէս շոգնաւի, օդապարիկի, սաւառնակի, մանրացոյցի, հեռագիտակի են... կը բացատրէ թնդանօթի կազմութիւնը, վառողի արդիւնքները, կը նախատեսէ շագնկառքի գիտը և եկեղատութեան գործածութիւնը իրեն միւս գործերուն համար ներկայ դարուս մատենագիր մը կը գրէ. «Պաքոն վերանորոգութեան նոր մղում մը տուաւ դաստիարակական, իմաստասիրական և աստուածաբանական գիտութեանց, Նա հիմը դրաւ ողջամիտ մեկնութեան և պատմական քննադատութեան Ս. Գրոց մէջ ։

Եգիպտոս Մամուր, Սպանիոյ Ալփոնսոս Ժ. խորհրդակիցը, իրեն հազուագիւտ հմտութեան համար՝ ըլլալ քնական ըլլալ

նաև սրբազան գիտութեանց մէջ՝ կոչուեցաւ Իրկորդ Պաքոն, Պերդուտոյ Շվարց որուն կը տրուի հրացան գործիքներու գիտը, ժամանաւորապէս Թեոֆանօթի Ղուկաս Բաշիովի՝ որ երեւի թուաբանագէտ, ներէն մին էր, և ինքն առաջինն եղաւ որ զբանաշիւր երկրաչափութեան յարմարացուց։ Յովհաննէս Միւլլաք, որ առաջին անգամ ժողովեց ներքննողիով մը միացնել Ամերիկան Եւրոպայի։

Ձանց կ'ընեմ հոս յիշել մի առ մի Ֆրանչիսկեան այն քարոզիչները, որոնք դարերու շրջանին անուանի եղան Աշխարհագրական, Տեղագրական, Ազգաբանական և Լեզուագիտական ուսմանց մէջ։

Ֆրանչիսկեան կարգին երևան գալիսն ու տարածուելովը նոր դարագլուխ մը սկսաւ Եւրոպայի զբականութեան և ճարտարաբանութիւն մէջ։ Ա. Ֆրանչիսկոս Ասիւզացի, կ'ըսէ Թոտէ, վերանորոգելով, անցնելով ու կենդանացնելով կրօնական կեանքը, մեծ ազդեցութիւն ըրաւ գիտութեանց ընդհանուր զարգացման՝ ժամանակը բանաստեղծութեան և արուեստից։ Ս. Ֆրանչիսկոս ինքնին սիրեց արուեստը ու մշակեց զայն, իբրև անգին պարզներ գեղեցկութեան Հեղինակին. և իբրև ամենազուր միջոցներ Անոր փառքի տարածման։ Անոր առ արևն հոգեզմայլ երգը, որուն մէջ հեղած է իւր հոգւոյն բոլոր հարստութիւնները և հանճարին բոլոր վեհութիւնը, անտարակոյս ինչպէս դիտել կու տայ Շվանէ, հսկայ կոթող մ'է գրականութեան մէջ, և բանալի արուեստի ապագայ փառաւոր ձգտումներուն՝ իրենց կարգին մէջ։

Բանաստեղծութեան մէջ Ֆրանչիսկեանները նուիրուեցան աւելի հոգեւոր և ժողովրդական բանաստեղծութեան. և արդէն Ս. Ֆրանչիսկոսի առաջին աշակերտներու մէջ իսկ կը տեսնենք երկու հոյակապ բանաստեղծներ, Հ. Բաշիֆիքոյ որ փրեդերիկոս Բ. Վյարսէն պսակուեցաւ «Նոստրոս քաջատու» տիտղոսով. և Թովմաս Չելանցի, հեղինակ Օր յարկոս րեան (Dies Irae) արտաշարժ տալիս

կուլիբիմոս Սրբորցի որ շինեց Ս. Ֆրանչիսկոսի և Ս. Անտոնի ժամերգութեան գեղեցիկ տաղերը. յորինեց նաև զանազան երգեր Գրեգորեան եղանակով։ Ս. Պոնաւենթուրա որ զանազան գեղեցիկ տաղերէ զատ շինեց Չարչարանաց Ժամերգութիւնը։ Եւրոպոյնէ Թոտեցի հեղինակ «Կայր առ խալիկ» խորհրդաւոր երգին։ Սա ազնուական ընտանեաց զաւակ, քաջ զբաղէր և փաստաբան և աշխարհի մարդ, կորսնցնելով իւր կինը պարահանդիսի սրահի մը աւերակներուն ներքեւ, թողով մաքն բան հագաւ Ս. Ֆրանչիսկոսի զգեստը, զգնելով միանգամայն անոր սրով. բէասաց ոգին. իւր բանաստեղծութիւնները կը ըլլին երբեմն իւր հոգւոյն խորէն՝ նման անասնո՜ւ ալիքներու, երբեմն հանդարտ, քաղցր սիրազեղ և փափկահիւս։

Եւրոպոյնէ կը ցուցնէ իտալական կեանքը իւր մէկ տեսակէտով, ուր այնքան ճշգրիտ է ու անկեղծ՝ որ կարելի չէ գտնել ուրիշի քով։ Նմանապէս մեծ յարգ ունի իտալիոյ ժողովրդական զբականութեան մէջ Մաքիաւքոյ Փրոսկիսկոսին, որ բանաստեղծական կտորներ են Սուրբին վարքէն հանուած։

Փեղարուեստից պատմութիւնը առաւելօքն կը վկայէ, թէ ինչպէս Ֆրանչիսկեան կարգը ունեցաւ այն մեծ ազդեցութիւնը նկարչութեան, քանդակագործութեան և ճարտարապետութեան վրայ։ Արդէն Ս. Ֆրանչիսկոսի և իւր աշակերտաց բանաստեղծական կեանքը առատ նիւթ հայթհայթած էր Միջին դարու արուեստագէտներուն. ասկէ զատ դեռ ուրիշ շատեր փայլեցան ճարտարաբանութիւն մէջ, թէպէտ անոնց անունը լռէ պատմութիւնը, բայց անոնք կ'ապրին միշտ իրենց գործերուն մէջ. անոնք արժանի էին լաւագոյն գնահատութեան մը։

Այսպէս Ս. Ֆրանչիսկոս և իւր Հաստատութիւնը, իրեն բազմակողմանի գործունէութեամբ զարմանալի ամփոփում մ'է աստուածաբանականին և արուեստից, հոգեւոր գիտութեանց և փորձառականին,

որոնք միացած սրբազան զօդով մը՝ զոր-
ծեցին և կը գործեն ազգեցութիւն մը այն-
քան ընդարձակ և այնքան յարատեւ՝ մարդ-
կային գործունէութեան ամէն խաւերու
մէջ թափանցելու աստիճան, ազուակա-
նացնելով միանգամայն ամենաբարձր գա-

ղափարներով այն հաւատքին՝ որ չի վա-
խեր երբեք ցնցումէ, չի գիտեր պար-
տութիւն և ոչ արեւմուտք, այլ կը ճանա-
պարհորդէ դարբնու հոսանքին մէջէն,
սփռելու համար ժամանակի մէջ յաւիտե-
նական լոյսը:

Հ. Խ. ՎԻՐԱՆԵՍԵԱՆ

ՄԻԼԱՆՈՒ ՄԻՒԹԱՐԵԱՆ ՈՐԲԱՆՈՑ-ՎԱՐԺԱՐԱՆԸ

ՅՈՒԼԻՍԻՍ սկիզբը՝ Հաստատութիւնս
իր դպրոցական վեցերորդ՝ տարեշրջանը,
իսկ Միլան հաստատուելուն երրորդ տա-
րեշրջանը կը լրացնէր: Անցած այս տա-
րեշրջանի մէջ (1925-26) Հաստատու-
թիւնս ունեցաւ 60-ի չափ մնայուն որբ
սաներ, որոնցմէ 40 հատը ներքին ուսա-
նողներ էին, այսինքն որբանոցին մէջ կա-
նոնաւոր դասընթացը ընող որբեր, իսկ
մնացածները զուրար քաղաքին մէջ գա-
նազան հաստատութիւններ և կամ ար-
հեստանոցներ կը յաճախէին:

Կարող ենք ըսել, որ երեք ուրոյն տար-
րիւր ունեցանք որբանոցիս մէջ. Նոյեմբրին
ուսանողներ, Արտաքին ուսանողներ և Ար-
հեստարներ: Կարելի չէ ճշդել ասոնց
մասնակի թիւերը, որովհետեւ տարուան
ընթացքին երբեմն աւելցան երբեմն պակ-
սեցան:

1926ի յունուարին մէջ Տեսչութիւնը
կը փոխուէր. սկսուած կրթական գործու-
նէութիւնը անդադրուած շարունակուեցաւ:
Որբանոցիս վարչութիւնը յատկապէս աշ-
խատեցաւ արհեստաւոր տղոց դիրքը բար-
ւոցելու՝ լաւագոյն գործատուներուն մէջ
զանոնց տեղաւորելով, և մասնագիտական
արհեստանոցներու մօտ դիմումներ կատա-
րելով անոնց զարգացումին համար: Այս
տարի հինգ շրջանաւարտ աշակերտ ունե-
ցանք մասնագիտական ճիւղի մէջ. երեք
հոգի՝ Թումանյան, Կէօշէրեան և Գասպա-
րեան պատանիք յաջողութեամբ ստացան
Շերամաքտնոքեան և յատուկ մեքենագի-
տութեան վկայականը. Պաղտատարեան,
Քեանհեանն Նոյնպէս զովետով ստացան
կերպասաշիւորեան և յատուկ մեքենագի-
տութեան վկայականը. ասոնց ընկերներէն
մէկ. հոգի ընթացքը դադարեցուց ֆիզիքա-

1. Միւթարեան Միւթարեան համար այս Որբա-
նոցը իր գոյութիւնն ունեցած է 1920ի Նոյեմբրեան
սկսեալ, երբ Պուլսոյ Քրիստոս Նուիրեան
Տուլէի, յանձն Քինեղիկոսոս Ժեմարեան Պապին,
այս Թուրքիայէն ճիշդ տարի մ'առաջ հայ որբերու հա-
մար բացած որբանոցին վարչութիւնը կը յանձնէր Միւթ-
արեան Հայրերու, Հազիւ տարի մ'անցած, Եղիշիւ ա-
ղան Խոս, որբանոցը իրաւելա փոխադրուեցաւ, վե-
նեակոյ մօտ Ֆիլէսոյ տ'Արդիոյ կողմած զիւրը, և
անկէ ալ Միլան, ուր աղքատ աւելի դիւրաւ պիտի կա-
րենային արհեստի ու գործի հետեւել: Պուլսին փոխա-

դրուած այս որբերու Թուրքիայէն եկան աւելեալու վերջին
անգամ Յունաստանէն փոխադրուած որբեր, որոնց նա-
խորդներուն մէկ մասնն ինչ միասին հաստատուեցան
ներկայ Որբանոցին մէջ՝ Վիլիս Ուսուցիչ պոլոտային
վրայ: Ուրեմն ներկայ Որբանոցս շարունակութիւնն է վեց
տարի առաջ Պուլսի ինքնուած «Քինեղիկոսոս Ժեմարեան»
որբանոցին, և ոչ թէ Ռուսաստանէն բերուած 10-12 պա-
տաններու համար բացուած որբանոցի մը, ինչպէս որ
ժամանակին՝ Իրիտղը կ'աւանդէր Նոր Լուսին մէջ՝ Ռու-
սաստանէն հասած այդ որբերը զրեթէ ամբողջութեամբ
վեճեմեակ Մ. Ռ. Վարժարան փոխադրուած էին: